Նկ. 1. Մատթեոս ավետարանիչ, ՄՄ պատառիկ Հմր 59



Նկ. 1ա. Մատթեոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. Հմր 4777

Նկ. 2 Մատթեոսի անվանաթերթ, ՄՄ պատառիկ Հմր 59

Նկ. 2ա. Մատթեոսի անվանաթերթ, Հմր 543 Ուոլթերս պատկերասրահ, ԱՄՆ

Նկ. 2բ. Մատթեոսի անվանաթերթ, ՄՄ ձեռ. Հմր 4777



Նկ. 3. Լուսանցային մանրանկար. Հովհաննես Մկրտիչ, ՄՄ Հմր 59 պատառիկ



Նկ. 3ա. Հովհաննես Մկրտիչ, ՄՄ ձեռ. Հմր 4777



Նկ. 3բ. Հովհաննես Մկրտիչ, ՄՄ ձեռ. Հմր 7629

Նկ. 4. Լուսանցազարդ, Զույգ հուշկապարիկներ, ՄՄ պատառիկ Հմր 59

Նկ. 4ա. Լուսանցազարդ, Հուշկապարիկ, ՄՄ
ձեռ. Հմր 4777



Նկ. 5. Զարդագիր, լուսանցազարդ, ՄՄ պատառիկ Հմր 59



Նկ. 6. Մատթեոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. Հմր 1791



Նկ. 6ա. Մատթեոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. Հմր 4940

Նկ. 7. Մարկոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. Հմր 1791



Նկ. 7ա. Մարկոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. Հմր 4940

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԵԴԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ
ՄՄ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՈՒ ՊԱՏԱՌԻԿ

Ձեռագրերի եւ անգամ տպագիր հին գրքերի հետ առնչվելիս ժամանակ առ ժամանակ գործ ենք ունենում ավելի վաղ շրջանի ձեռագիր պատառիկների հետ: Ձեռագրական «պատառիկ» ասելով՝ հասկանում ենք հիմնականում հին՝ ամբողջությամբ մեզ չհասած ձեռագրերի առանձին հատված-հատակոտորները, որոնք համեմատաբար նոր ձեռագրերում առկա են որպես պահպանակներ, երբեմն էլ՝ կազմերեսներ կամ կազմաստառներ: Սույն հոդվածի խնդրո առարկաներն են Մաշտոցյան Մատենադարանի հայերեն Հ՚ր 59 ձեռագիր պատառիկը եւ Հ՚ր 1791 ձեռագրի կազմաստառ-պատառիկները:

Հայերեն Հ՚ր 59 ձեռագիր պատառիկի մասին խոսելուց առաջ հարկ ենք համարում ներկայացնել ձեռագիր պատառիկներին վերաբերող մի համառոտ տեղեկություն: Հայտնի է, որ թե՛ քանակով եւ թե՛ գիտական արժեք-որակով Մաշտոցյան Մատենադարանում երկրորդը հայերեն պատառիկների հավաքածուն է՝ ընդհանուր հաշվով 2215 միավոր: Այս հարուստ հավաքածուն կազմվել է հիմնականում Մատենադարանի ձեռագրերում պատմականորեն դրված պահանակները՝ ավելի հին ձեռագրերի մասունքներն անջատելով, ինչ-որ չափով նաեւ՝ 1915-1916 թթ. Վասպուրականից ու Տարոնից բերված ձեռագրական հատակոտորներից, 1930-1936 թթ. Հայաստանի տարբեր շրջաններում գիտական արշավախմբերի հավաքած նյութերից: Մի քանի հարյուր պատառիկներ գնվել կամ նվեր են ստացվել տարբեր անհատներից[1]*:*

[1] Տես «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա., Երեւան, 1965, էջ 195:

Վերջին տարիներին Մաշտոցյան Մատենադարանում սկսվել է նաեւ այս մեծարժեք հավաքածուի նկարագրման աշխատանքը: Պատառիկների զգալի մասը, ինչպես վերը նշվեց, նախկին պատառիկ-պահպանակներ են, որոնք իրենց բնակալ-ամբողջական ձեռագրերից անջատվել են հիմնականում նախորդ դարասկզբին: Պատառիկ-պահպանակները դիտվում են իբրեւ առանձին-ուրույն ձեռագրեր ու նկարագրվում են ըստ ամբողջական ձեռագրերի համար մշակված հարցակարգի: Նրանք ունեն յուրահատկություններ, որոնց նկատառումով եւ անհրաժեշտ նյութի նախնական քննությամբ կազմվել է «Պատառիկների նկարագրության հարցակարգը»[2]: Նախ գրվում է պատառիկի գույքահամարը, ապա՝ անունը (ասենք՝ «Աւետարան»), հետո՝ ժամանակը: Եթե նախկինում ձեռագրի պահպանակ է եղել, ապա ըստ Մաշտոցյան Մատենադարանի համառոտ «Ցուցակ ձեռագրաց»-ի՝ նշվում են բնակալ-ձեռագրի համարը, խորագիրը, գրչության վայրը, թվականը, գրչի, ծաղկողի, կազմողի, ստացողի կամ պատվիրատուի անունները (հայտնի լինելու դեպքում), նյութն ու չափերը: Ապա գրվում են պատառիկի թերթաքանակը, մեծությունը, շարվածքի չափը, գրատեսակը, գրությունը (միասյուն, երկսյուն, եռասյուն), սյունակամեջը, տողերի քանակը, տողի բարձրությունը, տառի բարձրությունը, տողամեջը, կետադրությունը, մանրանկարչությունը, վիճակը, նկարափորձը, գրչափորձը, կնքադրոշմը:

Այնուհետեւ տրվում է պատառիկի բնագրի ամբողջական վերծանությունը, բացառություն են միայն Ավետարանները, որոնց դեպքում նշվում են միայն բնագրի սկիզբն ու վերջը: Բնագրի վերծանության մեջ օգտագործվում են հետեւյալ նշանները. ուղղանկյուն փակագծերում՝ [] վերականգնվում են դժվարընթեռնելի կամ անընթեռնելի հատվածները: Ձախից կամ աջից դրված մեկ ուղղանկյուն փակագիծը՝ [կամ] նշանակում է, որ կտրված կամ պատռված լինելու պատճառով պատառիկի այս կամ այն կողքից բնագրի մաս է բացակայում: Թեք գծերը՝ /// նշանակում են պատառիկի տվյալ հատվածի անընթեռնելիություն:

Նախ՝ այս հարցակարգն առավել առարկայորեն պատկերելու, ապա նաեւ՝ հետագա շարադրանքի հստակ ընկալման համար բերում ենք մեր խնդրո առարկա պատառիկի նկարագրությունը.

---

[2] Տես **Գ. Տէր-Վարդանեան**, Մուտք, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց», հ. Է., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Երեւան, 2012, էջ 6:

59
ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԺԵ. դար

Հմր 236 ձեռագրից: Աւետարան: 1646 թ.: Կ. Պոլիս: Գրիչ՝ Եղիա Համթեցի: Ստացող՝ Վարդան երէց: ԹԵՐԹ՝ 318: ՆԻԻԹ՝ մագաղաթ: 21.6x15:

ԹԵՐԹ՝ 12: ՆԻԻԹ՝ ԹՈՒՂԹ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27.3x18.6: ԼՍ. ՉԱՓԵՐ՝ արտք.՝ 4, նրք.՝ 2.5, վր.՝ 2.5, ստ.՝ 5.3: Գրաղաշտ՝ 19.5x12.5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ՍԻՆԱԿԱՄԷՋ՝ 1.5: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 21, տողի բարձրութիւն՝ 1.6. տառի բարձրութիւն՝ 0.6. տողամէջ՝ 0.7: ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ ունի: ԳԼԽԱՏԱՌ՝ ունի, գլխատառերը կարմիր թանաքով: ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ՝ — ° : . , : Համաբարբառի մանրատառեր ստորին լուսանցներում: Մանրանկարչութիւն - 2բ՝ Մատթէոս աւետարանիչ. գոյնը՝ կանաչ, կարմիր, դեղին, մանուշակագոյն, սեւ, մոխրագոյն: 3ա՝ Մատթէոսի Աւետարանի անուանաթերթը. բաղկացած է կիսախորանից (ճակատազարդ. հազուադէպ երեւոյթ է հայկական մանրանկարչութեան մէջ). ներսում օգտագործուած են բուսական հիւսուածքազարդեր, վերին հատուածում պատկերուած են բուսազարդերից կազմուած անկիւնազարդեր, կիսախորանի վերին հատուածի կենտրոնում պատկերուած են քրիստոնէական հաւատը խորհրդանշող երկու թռչուն, աջ կողմում պատկերուած է բուսական լուսանցազարդ՝ պսակուած խաչով, սկզբնատառ զարդագիր Գ՝ մարդագիր եւ թռչնագիր. գոյնը՝ կարմիր, կանաչ, շագանակագոյն, մանուշակագոյն, սեւ: 4բ եւ 5ա՝ արտաքին լուսանցներում բուսական լուսանցազարդեր եւ Ե զարդագրեր. գոյնը՝ կանաչ, կարմիր: 6ա՝ արտաքին լուսանցում լուսանցազարդ՝ յուշկապարիկ եւ զարդագիր Ե՝ թռչնագիր. գոյնը՝ կանաչ, կարմիր, դեղին: 7ա. արտաքին լուսանցում լուսանցային մանրանկար՝ Յովհաննէս Մկրտիչ եւ զարդագիր Յ. գոյնը՝ կանաչ, կարմիր: 8ա՝ արտաքին լուսանցում բուսական լուսանցազարդ եւ զարդագիր Յ. գոյնը՝ կարմիր, կանաչ: 9ա՝ արտաքին լուսանցում բուսական լուսանցազարդ եւ զարդագիր Ե.: 10բ՝ արտաքին լուսանցում լուսանցազարդ՝ զոյգ յուշկապարիկ (հազուադէպ երեւոյթ է հայկական մանրանկարչութեան մէջ), զարդագիր Ե՝ թռչնագիր. գոյնը՝ կանաչ, կարմիր, դեղին: 11բ՝ արտաքին լուսանցում բուսական լուսանցազարդ եւ զարդագիր Մ. գոյնը՝ կանաչ, կարմիր:

ՎԻՃԱԿ՝ թղթերի հիմքի եւ վերին հատուածներում տեղ-տեղ խոնաւութեան եւ սնկային հիւանդութեան հետքեր: Եզրերը՝ դեղնած, մաշուած: 2ա, 3ա, 11ա, 12ա՝ ստորին աջ անկիւնը լրացուած դեղնաւուն թղթով: 1բ, 12բ՝ անցքեր: 12ա՝ հիմքի մասը նորոգուած այլ թղթով: Մանրանկարների գոյները՝ խոնաւութիւնից թափուած, եղծուած: 2բ. 3բ. 4ա. 4բ. 5բ. 6բ. 7բ. 8բ. 10ա. 11ա. 12ա. հանդիպակաց էջերում մանրանկարների արտատպուած հետքեր: Լուսանցակողերի կարմիրը գունաթափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2բ.-12բ. Աւետարան ըստ Մարկոսի (գլ. Ա., հմր 1 - գլ. Ե., հմր 32):

Պատառիկի մայր ձեռագրի գրչութեան մոտաւոր ժամանակը պարզել կամ թվագրել հնարաւոր է միայն հնագրագիտական-ձեռագրագիտական եւ արվեստաբանական մանրամասն քննութեամբ: Առաջին միջոցը, անշուշտ, նրա բոլորգիր գրաձեւը թվակիր նույնպիսի՝ բոլորգիր ձեռագրերի գրչութեան հետ համեմատելն է: Պատառիկի տողի բարձրությունը՝ 1.6, տառի բարձրությունը՝ 0.6, տողամեջը՝ 0.7 սմ է: Մեր թվագրումը մոտաւոր է եւ չի կարող զերծ լինել սխալներից, քանի որ հիմնված է զուտ հնագրական առանձնահատկությունների վրա, իսկ դրանք հաճախ կատարյալ ճշգրիտ լինել չեն կարող:

Պատառիկի գրատեսակը համեմատեցինք հնագրագիտական նորագույն ձեռնարկի՝ «Հայկական հնագրության ալբոմ»-ում[3] զետեղված թվակիր ձեռագրերի լուսանկարների եւ գրերի ժամանակագրական աղյուսակների, ինչպես նաեւ Մատենադարանում պահվող՝ Վասպուրականում գրված գրեթե բոլոր ձեռագրերի հետ:

«Հայկական հնագրության ալբոմ»-ի գրերի ժամանակագրական աղյուսակում պատառիկի գրերին արտաքին նմանությամբ ամենամոտ ձեռագիրը ԺԵ. դարով թվագրվող՝ Մատենադարանի Հմր 4777 Ավետարանն է, որի գրիչը Մկրտիչն է, գրչության վայրը հայտնի չէ, բայց ոճական եւ պատկերագրական առանձնահատկություններով վերաբերում է Վասպուրականի դպրոցին: Կարծում ենք, որ պատառիկը, ամենայն հավանականությամբ, ԺԵ. դարի ձեռագրից է, այսինքն՝ այն 27.3x18.6 սմ մեծությամբ եւ ԺԵ. դարով թվագրվող, չպահպանված մի ձեռագիր Ավետարանից է:

---

[3] Տես **Մ. Սթոուն, Տ. Գույումճեան, Հ. Լեհման**, Հայկական հնագրութեան ալբոմ, Ս. Էջմիածին, 2006:

Պատառիկն արժեքավոր է նաեւ մանրանկարչական հարդարանքի տեսանկյունից: Այստեղ գործ ունենք ավետարաններին հատուկ մանրանկարչական այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են ավետարանչի պատկերն ու անվանաթերթը, լուսանցային մանրանկարը, լուսանցազարդերն ու զարդագրերը:

Այս պատառիկի հետ առանձնահատուկ ընդհանրություններ ունի Բալթիմորի Ուոլթերս պատկերասրահի հայերեն Հ՚մ՚ 543 ձեռագիրը[4]*, հատկապես դրա անվանաթերթի հարդարանքը (նկ. 2ա): Հետաքրքիր աղերսներ կան նաեւ ՄՄ Հ՚մ՚ 4777 ձեռագրի անվանաթերթերի հետ (նկ. 2բ): Ուոլթերս պատկերասրահի ձեռագիրը գրվել է 1455 թ.՝ Խիզանում, գրիչը Հովհաննեան է, ծաղկողը՝ Խաչատուրը: Այս ձեռագրի՝ Մատթեոս ավետարանչի անվանաթերթի մշակումը, ճակատազարդի խաչակերպ կամարաղեղը թույլ են տալիս ենթադրել, որ մեր պատառիկի մայր ձեռագիրը եւս կարող է գրված լինել Խիզանում:*

Մեր պատառիկում պահպանված՝ ամբողջական էջ զբաղեցնող միակը Մատթեոս ավետարանչի մանրանկարն է: Մատթեոսի պատկերն անվանաթերթի հետ միասին պատառիկի սկզբում է (նկ. 1). ավետարանիչը պատկերված է գլանաձեւ բարձով (մութաքա) բարձր աթոռին նստած՝ իր գրելիքի մասին խորհրդածելիս: Ինքնամփոփ հայացքն արտացոլում է Քրիստոսի կյանքը նկարագրող ոգեշնչված աշակերտի ստեղծագործական հոգեվիճակը: Ծաղկողը, որի անունը, ցավոք, մեզ չի հասել, ավետարանչին պատկերել է ալեհեր, նշաձեւ աչքերով, երկարավուն դեմքով:

Մանրանկարն աչքի է ընկնում գունային անխառն, մաքուր լուծումներով, հորինվածքի կուռ ամբողջականությամբ: Մատթեոս ավետարանչի պատկերը որոշ ընդհանրություններ ունի վերը նշված Հ՚մ՚ 4777 ձեռագրի նույնանուն ավետարանչի պատկերի հետ (նկ. 1ա):

Մատթեոսի Ավետարանի անվանաթերթն աչքի է ընկնում ոճավորված կամարաղեղով: Ճակատազարդի ուղղանկյան ներսում՝ կարմիր խորքի վրա, պատկերված են բուսական եւ երկրաչափական զարդանախշեր, որոնց կենտրոնում՝ մեդալիոնի մեջ, պատկերված է հավասարաթեւ խաչ: Ճակատազարդի վերին անկյուններում պատկերված են բուսազարդերից կազմված ակրոտերիոններ (եղջյուրներ), իսկ կենտրոնում՝ բուսազարդից դուրս են գալիս պոչերով իրար միահյուսված երկու թռչունների պատկերներ: Ճակատազարդից ցած պատկերված է «Գ» սկզբնատառը՝

[4] Տես **Th. Mathews, R. Wieck,** Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, The Pierpont Morgan Library, New York, 1994, էջ 153-154:

Մատթեոսին խորհրդանշող հրեշտակի տեսքով (նկ. 2): Ավետարանչի մանրանկարը հարթ է: Հիմնական արտահայտչամիջոցը գիծն է, որը կենսունակություն է ստանում մաքուր եւ վառ ներկերի համադրությամբ: Մանրանկարում հեռանկարի խնդիրը լուծված չէ:

Ավետարանի լուսանցներում, հավանաբար, ծաղկողը պատկերել է ավետարանական պատմության մի քանի դրվագ եւ արել նոր գլուխների սկիզբները նշող զարդանախշեր[5]: Լուսանցային մանրանկարներից, ցավոք, պահպանվել է միայն Հովհաննես Մկրտչին պատկերողը (նկ. 3): Ծաղկողը լուսանցում միայն մեկ թեմա է արծարծում, ընդ որում, թեմային վերաբերող բնագիրը մեծ մասամբ հենց պատկերի կողքին է, որով այդ երկուսը լրացնում են միմյանց: Հովհաննես Մկրտիչը վասպուրականյան բնորոշ պատկերատիպով է: Ուշադրության է արժանի հատկապես Վասպուրականի դպրոցի ՄՄ Հ՝ 7629 (1397 թ.՝ Խիզան, գրիչ՝ Ռստակես, ստացող՝ Մարտիրոս) ձեռագրի 14ա էջի խորանի՝ Հովհաննես Մկրտչի պատկերը, որը սանրվածքի մշակմամբ, մորուքով, պարեգոտով, նշաձեւ աչքերով ընդհանրություններ ունի մեր պատառիկի՝ Հովհաննես Մկրտչի նկարի հետ (էջ 7ա. նկ. 3բ), սակայն պատառիկի ծաղկողը Հովհաննես Մկրտչին պատկերել է առանց լուսապսակի եւ ավելի պարզունակ մշակմամբ: Ծաղկողը պատկերների ձեռքերի ու ոտքերի մշակման հարցում այնքան էլ հմուտ չէ: Այս առումով պատառիկի նկարն ընդհանրություններ ունի ՄՄ Հ՝ 4777 ձեռագրի լուսանցազարդի Հովհաննես Մկրտչի պատկերի (նկ. 3ա) հետ:

Ինչ վերաբերում է լուսանցազարդերին, դրանք հիմնականում երկրաչափական եւ բուսական ոճավորված զարդանախշեր են, երբեմն արտահայտված են հուշկապարիկների, նույնիսկ զույգ, թագակիր հուշկապարիկների տեսքով (նկ. 4): Առանձնահատուկ ուշադրության է արժանի Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի լուսանցազարդը, որը պսակված է խաչով եւ ունի շքեղ նկարազարդում:

ՄՄ Հ՝ 4777 ձեռագրում ավետարանիչը (նկ. 1բ) նստած է բարձր թիկնակով աթոռի վրա, ամբողջ խորքը լի է երկրաչափական նախշերով, ձեռքերի ու ոտքերի մշակման հարցում ծաղկողը դարձյալ դժվարություններ է ունեցել: Հետաքրքիր զուգահեռներ կան գծիկային մշակմամբ սանրվածքի եւ սնգուրած այտերի, ինչպես նաեւ երկուսի դեպքում էլ ձեռքերի ու ոտքերի վրա արված կարմրանարնջագույն գծերի միջեւ:

---

[5] Տես **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան**, Զորավոր Ավետարանը, Երեւան, 2016, էջ 23:

Սակայն, ի տարբերություն Հմր 4777–ի, մեր պատառիկի ավետարանչի կերպարը ավելի ծավալային է՝ առանձնապես հագուստի մշակման հաշվին:

Ընդհանրություններ կան նաեւ շրջանակների ու անվանաթերթի ծաղկատերեւային նախշերի միջեւ: Բնագրի գլխատառերը եւս առաջին հայացքից նմանություններ ունեն. հետաքրքիր են նաեւ հուշկապարիկները՝ թագերով (նկ. 4, 4ա) եւ զույգերով պատկերված:

Մեր պատառիկի անվանաթերթի շրջանակի եւ կամարաղեղի նմանատիպ մշակում կա ՄՄ Հմր 7566 (1460 թ.՝ Խիզան, գրիչ՝ Հովհաննես քահանա) ձեռագրում, թեեւ ավետարանիչների պատկերների հարցում ընդհանրություններ չկան, սակայն այստեղ եւս կան դեմքին, ոտքերին ու ձեռքերին արված կարմրանարնջագույն գծեր:

Անվանաթերթերում նման շրջանակներ եւ կամարաղեղի մշակում հանդիպում ենք Վասպուրականի տարբեր դպրոցներում՝ Խիզանում, Արճեշում, ինչը դժվարացնում է անվանաթերթի նկարազարդման օգնությամբ պատառիկի ստեղծման դպրոցի պարզումը, սակայն ավետարանիչների պատկերների եւ անվանաթերթերի որոշ ընդհանրություններ կրկին թույլ են տալիս ենթադրել, որ, հավանաբար, այս պատառիկի մայր ձեռագիրը կարող է ստեղծված լինել Խիզանում:

Պատառիկի գրադաշտն աչքի է ընկնում նաեւ բազմաթիվ զարդագրերով, որոնք հիմնականում հանգուցագրեր ու թռչնագրեր են: Զարդագրերի գրեթե կեսից ավելին «Ե» գլխագրի՝ հիմնականում թռչնակերպ տեսակներն են (նկ. 5): Նախքան դրանց քննությանն անցնելը՝ անհրաժեշտ է նկատել, որ գրերը ձեւավորելու առաջին փորձերը հայերեն ձեռագրերում ի հայտ են գալիս դեռեւս Ժ. դարից[6]: ԺԱ. դարավերջից զարդագրեր հանդիպում են հայկական մատյանների ոչ միայն անվանաթերթերում, այլեւ ավետարանական բնագրի գլուխների սկզբում:

Մաշտոցյան Մատենադարանում այսօր պահվող հայերեն ամբողջական 11.314 ձեռագրերից ավելի քան 2200 միավորը պատառիկ-պահպանակ ունի: Դրանցից նկարազարդ են շուրջ 300-ը, որոնց հիման վրա մեր կազմած ցանկից պարզ է դառնում, որ համեմատաբար մեծ խումբ են այն պատառիկ-պահպանակները, որոնց նկարազարդումները միայն լուսանցազարդեր են: Սակայն շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն պատառիկ-պահպանակները, որոնք բովանդակում են վաղ շրջանի

[6] Զարդագրության մասին մանրամասն տես «Հայկական մանրանկարչություն. Զարդագրեր», Երեւան, 1992:

խորաններ, ինչպես նաեւ ավետարանիչների, կիսախորանների, սրբերի ու զորավարների պատկերներ: Բացի այդ՝ գտել ենք նաեւ տերունական մանրանկարներ պարունակող բացառիկ օրինակներ:

Հանդիպում ենք նաեւ որոշ օրինակների, երբ հին ձեռագրի տերունական մանրանկարները կտրվել եւ փակցվել են նոր ձեռագրի կազմին կամ տերունական պատկերը նկարվել է հենց կազմի վրա: Մեր այս օրինակը՝ ՄՄ Հմր 1791 ԺԴ. դարի ժողովածու ձեռագիրն առավել հետաքրքիր է նրանով, որ հին ձեռագրի պատառիկն այստեղ գործածվել է որպես կազմաստառ[7]*:*

Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակում կազմաստառ-պահպանակները, որոնց վրա ավետարանիչների պատկերներն են, թվագրված են ԺԴ.-ԺԵ. դարերով. նրանց մայր ձեռագիրը, բնականաբար, չի պահպանվել:

Կազմի Ա. փեղկի ներսից սոսնձված է Մատթեոս ավետարանչի նկարը, որ շատ յուրահատուկ ոճ ունի: Ավետարանչի կերպարը տեսողական առումով, կարծես, երկու մասի բաժանված լինի, ինչը գունային մշակման հետեւանք է՝ բնորոշ հայկական մանրանկարչական դպրոցներից մեկին, որին կանդրադառնանք ավելի ուշ: Ավետարանչի լուսապսակը դեղին դաշտով է՝ մշակված կարմիր եւ կապույտ կետագծերով: Դեմքը սեւ ուրվագծմամբ է, մորուսի մշակումը դիմագծերին ճգվածություն է հաղորդել: Դիմագծերի, հատկապես աչքերի եւ հոնքերի մշակումը մատնանշում է այս պատառիկների կապը Վասպուրականի մանրանկարչության հետ: Ավետարանչի ոտքերը շատ պայմանական են մշակված. ոտքերի տակ երկարավուն բարձ է: Նա հագին ունի կապույտ թիկնոց եւ կարմիր ներքնաշապիկ. հագուստի երկու մանրամասն էլ ուրվագծված են նույն գույնի մուգ երանգով: Աջ ձեռքին գրիչն է, իսկ ձախով բռնել է կարմիր ուրվագծմամբ սպիտակ թուղթը: Պատկերի ամբողջ դաշտը լցված է ներքին եւ արտաքին շրջանակներով. ձախում արտաքին շրջանակների թիվը երեքն է, աջում՝ չորսը, ձախ կողմում է արված նաեւ ավետարանչի պատկերը, որով ծաղկողը պատկերը հավասարակշռության է բերել, այլ ոչ թե ծանրաբեռնել նկարի միայն մի կողմը: Անկյուններում բազմագույն կիսաշրջաններ են: Ներքին փոքր շրջանակները երկուսը-երեքի հարաբերակցությամբ են: Մանրանկարի շրջանակները կարմիր, կապույտ, կանաչ եւ վարդագույն անխառն գունավորմամբ են եւ զարդարված ականթա-

[7] Տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե., կազմ.՝ Օ. Եգանյան, Երեւան, 2009, էջ 1245-1246:

նախշերով ու արմավանախշերով (նկ. 6):

Գրեթե նույն սկզբունքով է մշակված Մարկոս ավետարանչի նկարը (նկ. 7ա): Այստեղ չեչտված է նաեւ ճարտարապետական հորինվածքի մի մասը՝ պատուհանը վարագույրով: Նրա առջեւ պատկերված են աշխատանքային գործիքները:

Երկու մանրանկարի կերպարները խոշոր են, ոճավորված: Նրանց մշակումը, գունային լուծումները, հորինվածքային մոտեցումը վկայում են այն մասին, որ այս մանրանկարները պատկանել են ԺԴ.[8] դարի վասպուրականյան մի ձեռագրի:

Մատենադարանի ձեռագրատանը փնտրելով՝ Վասպուրականից մեզ հասած ձեռագրերի շարքում գտանք մեկը, որի համար մեր մանրանկարները գուցե նախօրինակ են եղել կամ նույն դպրոցի աշխատանք են: Այդ ձեռագիրը Հ՚ր 4940 Ավետարանն է՝ 1534 թ. գրված Հովհաննու վանքում[9]: Ավետարանի գրիչ-ծաղկողը Խաչ աբեղան է, ստացողը՝ Մարտիրոս կրոնավորը:

Հ՚ր 4940 ձեռագրի ավետարանիչները մեր պատառիկ-պահպանակի հետ ունեն ինչպես ոճական, այնպես եւ պատկերագրական մի շարք ընդհանրություններ: Այստեղ շրջանակների մշակման նույն սկզբունքն է. ավետարանիչների լուսապսակները եւս մշակված են բազմագույն կետերի միջոցով: Դարձյալ ճարտարապետական տարածություն ստանալու փորձ է արված, հատկապես նկարի վերնամասը մշակված է փոքր պատուհանի տեսքով, որից կարծես աստղազարդ երկինք է երեւում:

Չնայած ունեցած նմանություններին՝ այս Ավետարանի ծաղկողն անհատական մոտեցում է ցուցաբերել. մանրանկարի ներքեւի աջ անկյունում սափորիկ է պատկերված, իսկ վերեւում՝ Աստծո աջը: Գունային լուծումները եւս ընդհանրություններ ունեն (նկ. 6ա):

Խաչ ծաղկողի մեկ այլ աշխատանք է Մատենադարանի Հ՚ր 3700 ձե-

---

[8] **Ա. Գեւորգյան**, Անանուն հայ մանրանկարիչներ, Մատենագիտութիւն, IX-XVII դդ., Գահիրէ, 2005, էջ 262-ում նշվում է, որ գուցե այս կազմաստառ պատառիկները պատկանել են ԺԶ. դարի մի ձեռագրի՝ հաշվի առնելով ավետարանիչների պատկերների խորքի հարդարումը, սակայն մեր պատառիկների ոճական մշակումները, այդ թվում եւ խորքի մշակումը, թույլ են տալիս ենթադրել, որ այն ավելի վաղ է արված եւ, ինչու ոչ, նախօրինակ է ծառայել ԺԶ. դարի ձեռագրերի համար:

[9] Այս անունով վանք հիշատակվում է Վասպուրականի երկու շրջանում՝ մեկը Բերկրիի գավառակում, մյուսը՝ Մոկսում. տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 443: Այս շրջաններից մեզ հասած ձեռագրերում, սակայն, չգտանք այնպիսի մի օրինակ, որն ընդհանրություններ ունենար մեր ձեռագրի եւ պատառիկ-պահպանակի հետ:

ռագիրը: Այս ձեռագրում ծաղկողի ձեռքն անվստահ է, վարպետության առումով մեծապես զիջում է նախորդ ձեռագրին: Այստեղ մանրանկարի գունավոր եւ ծաղկային նախշով շրջանակների մշակումը շեշտված չէ, դրա թույլ արտահայտումը տեսնում ենք Ղուկաս ավետարանչի նկարում: Այս ձեռագիրը մեր պատառիկների հետ պատկերագրական եւ ոճական աղերսներ չունի. ենթադրում ենք, որ դրանք նախօրինակ են եղել միայն Հ՝ 4940 ձեռագրի համար եւ, բացառված չէ՝ ինչ-որ ժամանակաշրջան պահվել են Հովհաննու վանքում կամ հենց այդ վանքում են ստեղծվել:

Այսպիսով, կարող ենք ասել, որ գործ ունենք Վասպուրականի մանրանկարչական դպրոցի նորահայտ երկու պատառիկի հետ, որոնց ոճական եւ պատկերագրական առանձնահատկություններն արտահայտում են մեզ հայտնի վասպուրականյան ավանդույթները, որոնք մեծապես կապված են ժողովրդական արվեստի պատկերացումների եւ նախասիրությունների հետ:

Լիահույս ենք՝ ժամանակի ընթացքում այս պատառիկների շարքը կհամալրվի նոր օրինակներով՝ պատառիկներով եւ ձեռագրերով, հատկապես այս դպրոցի վաղ շրջանի աշխատանքներով, որոնք հնարավորություն կընձեռեն պատկերացում կազմելու Վասպուրականի մանրանկարչության ավանդույթների ձեւավորման վաղ շրջանի մասին՝ հիմնվելով նաեւ արդեն հայտնի օրինակների վրա:

РЕЗЮМЕ

В статье представляются два новооткрытых фрагмента армянской миниатюрной школы Васпуракана: рукопись-фрагмент N 59 и подкладки к окладу рукописи N 1791 из Матенадарана. Рукопись-фрагмент N 59 кроме портрета евангелиста и заглавного листа имеет несколько иллюстрированных листов, а подкладки к окладу рукописи N 1791 представляют портреты евангелистов Матфея и Марка. Стилистический и иконографический анализ этих новооткрытых фрагментов, а также сравнение с общими образцами доказывают их связь с предпочтениями и представлениями армянской миниатюрной школы Васпуракана.

SUMMARY

In article the autors introduce two newly discovered samples of Vaspurakan's Armenian miniature school-manuscript fragment N 59 of Mashtots's Matenadaran and the underlay-setting fragments of N 1791 manuscript. Besides the Gospel painting and the title page, N 59 manuscript fragment also has several illustrated pages, and the underlay-setting fragments of N 1791 manuscript introduce the images of Matheus and Marcos Preachers. The stylistic and iconographic analysis of these newly-discovered fragments, as well as their comparison with the samples having several generalities state their connection with the preferences and apprehensions of Vaspurakan's Armenian miniature scholl.